/Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ /ՀԿ խորհրդի 18.11.2022թ-ի Թիվ 42-Ա որոշմամբ ռեեստրում գրանցման ամսաթիվը՝ 18.11.2022թ, հիմնական գրանցման համարը Թիվ /1220728/

ՀՎՀՀ 01046204
ք. Երևան, Էմինեսկու 2փ. 10/2

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ախուրյանի Կոռպշին» ՍՊԸ մասնակիցներին

Աուդիտորի կարծիքը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ախուրյանի Կոռպշին» ՍՊԸ այսուհետ «Ընկերություն» ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության համադրելի տեղեկատվությունը՝ 2021թ-ի ֆինանսական հավետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի վերաբերյալ տրվել է չձափոխված կարծիք 28.06.2022թ-ին:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական , երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝

-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
-Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են մինչև աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը
-Երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը
-ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

Տնօրեն, աուդիտի ղեկավար Լուսինե Շահոյան

«ԿՈՆՏՐՈԼ ՍԹԱՐ» ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն,

ք. Երևան Էմինեսկու 2փ 10/2տ

2023թ. հուլիսի 17

<<ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿՈՈՊՇԻՆ>> ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար. դրամ

	Ծա-նոթ.	2022թ	2021թ	2020թ
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4.1	718,815	757,767	782,433
Ֆին վարձ, ստացվ. Հիմնական միջոցներ	4.2	253,392	20,000	20,000
Կենսաբանական ակտիվներ				
Ներդրումային գույք				
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ				
Ոչ նյութական ակտիվներ	4.3	0	0	0
Բաժնեմասնության մեթոդով հաշվառվող ներդրումներ				
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			48,075	
Հետաձգված հարկային ակտիվներ				
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ				
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**972,207**	**825,842**	**802,433**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	4.4	1,204,825	315,352	1,349,611
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.5	479,303	378,864	1,866,890
Ընթացիկ հարկային ակտիվներ շահութահարկի գծով		13,584		
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			0	
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	4.6	24,860	35,128	4,917
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		747,450	815,568	161,180
Այլ ընթացիկ ակտիվներ				
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**2,470,022**	**1,544,912**	**3,382,598**
Ընդամենը ակտիվներ		**3,442,229**	**2,370,754**	**4,185,031**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(շարունակություն)

Հազար դրամ

	ծանոթ.	2022թ	2021թ	2020թ
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալ	4.7	11,800	11,800	11,800
Էմիսիոն եկամուտ				
Վերագնահատման պահուստ		271,984	317,227	360,827
Կուտակված շահույթ (վնաս)		695,966	484,242	273,418
Պահուստային կապիտալ		1,770	1,770	1,770
Սեփական կապիտալի այլ տարեր		0	-19,465	0
Ընդամենը սեփական կապիտալ		**981,520**	**795,574**	**647,815**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	4.8	269,026	287,000	134756
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ	4.9	235,771	13,147	14,515
Հետաձգված հարկային պարտավորություններ		58,934	65,787	76,548
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**563,731**	**365,934**	**225,819**
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	4.1	0	361,878	45,135
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4.11	1,892,697	819,266	3,250,110
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		0	5,559	
Պահուստներ այլ պարտավորությունների և ծախսումների գծով	4.12	4,281	21,381	14,764
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ			1,162	1,388
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**1,896,978**	**1,209,246**	**3,311,397**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**3,442,229**	**2,370,754**	**4,185,031**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 03.05.2023թ.

Տնօրեն՝ Ա. Տոնոյան

Գլխ. հաշվապահ՝ Հ. Պողոսյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծան որ.	2022թ	2021թ
Հասույթ	4,13	1,738,915	3,523,445
Վաճառքի ինքնարժեք	4.14	1,246,349	3,064,373
Համախառն շահույթ(վնաս)		492,566	459,072
Այլ եկամուտներ	4.15	18,850	4,938
Իրացման ծախսեր	4.16	3458	-
Վարչական ծախսեր	4.16	257,864	216,892
Այլ ծախսեր	4.16	2,433	12,201
Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)		247,661	234,917
Ֆինանսական ծախսեր	4.17	72968	40,788
Շահույթ(վնաս) մինչև հարկելը		174,693	194,129
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	4.18	8,212	26,905
Տարվա շահույթ(վնաս)		166,481	167,224
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդամենը համապարփակ արդյունք		166,481	167,224
Մեկ բաժնետոմսին բաժին ընկած բազային շահույթ (վնաս)			
Մեկ բաժնետոմսին բաժին ընկած նոսրացված շահույթ (վնաս)			

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն՝ Ա. Տոնոյան

Գլխ. հաշվապահ՝ Հ. Պողոսյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատումից պահուստներ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	11,800	360,827	1,770	273,418		647,815
Թողարկված բաժնետիրական կապիտալ				167,224		167,224
Մնացորդի ուղղում						-
Տարվա շահույթ/(վնաս)					-	-
Բաժնետոմսի թողարկում						-
Ներքին շարժեր		(43,600)		43,600		-
Սեփական կապիտալի այլ ավելացումներ և պակասեցումներ					(19,465)	(19,465)
Շահաբաժիններ						-
2021. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	11,800	317,227	1,770	484,242	(19,465)	795,574
Մնացորդի ուղղում						-
Տարվա շահույթ/(վնաս)				166481	-	166,481
Բաժնետոմսի թողարկում						-
Ներքին շարժեր		(45,243)		45,243		-
Այլ ավելացումներ և պակասեցումներ					19,465	19,465
Շահաբաժիններ						-
2022. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,800	271,984	1,770	695,966	-	981,520

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 03.05.2023թ.

Տնօրեն՝ Ա. Տոնոյան

Գլխ. հաշվապահ՝ Հ. Պողոսյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	2021թ դեկտեմբերի 31-ին ավարտվ տարի	2022թ դեկտեմբերի 31-ին ավարտվ տարի
Գործառնական գործունեություն		
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**4,917**	**35,128**
Իրացումից մուտքեր		
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	2,818,210	2,890,877
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	14,139	2,320
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր	1,838,237	1,549,272
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	189,279	177,723
Վճարումներ աշխատակիցներին	400,297	466,138
Վճարումներ բյուջե	485,440	188,835
Վճարումներ շահութահարկի գծով		29,388
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	14,343	23,446
Վճարված տոկոսներ		
այլ վճարումներ	121,051	284,730
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	3,048,647	2,719,532
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	- 216,298	173,665
Ներդրումային գործունեություն	- 80,909	
Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից մուտքեր		3,450
Այլ մուտքեր		228,999
Ներդրումային գործունեությունից այլ մուտքեր		
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	-	232,449
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից ելքեր	80,909	32,836
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	80,909	32,836
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	- 80,909	199,613
Ֆինանսական գործունեություն		
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր	674,186	193,481
Ֆինանսական գործունեությունից այլ մուտքեր	1,295	
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	675,481	193,481
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր	304,987	573,412
Վճարված շահաբաժիններ, տոկոսներ, այլ ելքեր	43,076	4,131
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	348,063	577,543
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	327,418	- 384,062
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	30,211	- 10,784
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ		516
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**35,128**	**24,860**

Տնօրեն Ա. Տոնոյան

Գլխ. հաշվապահ Հ. Պողոսյան